ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

**Հոդված 88. Ակցիզային հարկի դրույքաչափերը**

1. Օրենսգրքի 84-րդ հոդվածով սահմանված՝ ակցիզային հարկով հարկման օբյեկտ համարվող գործարքների ու գործառնությունների (բացառությամբ սույն մասի աղյուսակի 1-ին, 2-րդ, ~~11-րդ և 21-րդ~~ 10-րդ, 14-րդ և 15-րդ տողերով նախատեսված ծածկագրերին դասվող ապրանքների մասով իրականացվող գործարքների և գործառնությունների) հարկման բազայի նկատմամբ ակցիզային հարկը հաշվարկվում է սույն մասով սահմանված դրույքաչափերի և սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ ակցիզային հարկի հաշվարկման գործակցի արտադրյալով: ~~ԱՏԳ ԱԱ 2207, 2208 (բացառությամբ 2208 90 330 0, 2208 90 380 0, 2208 90 480 0, 2208 20, 2208 30, 2208 40), 2402 (բացառությամբ 2402 10 000 01, 2402 90 000 01, 2402 10 000 02, 2402 90 000 02), 2404 11 000 9, 2404 12 000 0 և 2404 19 000 ծածկագրերին դասվող ապրանքների մասով իրականացվող գործարքների և գործառնությունների հարկման բազայի նկատմամբ ակցիզային հարկը հաշվարկվում է սույն մասով սահմանված դրույքաչափերով.~~

Սույն մասի աղյուսակի 1-ին, 2-րդ, 10-րդ, 14-րդ և 15-րդ տողերով նախատեսված ծածկագրերին դասվող ապրանքների մասով իրականացվող գործարքների և գործառնությունների հարկման բազայի նկատմամբ ակցիզային հարկը հաշվարկվում է սույն մասով սահմանված դրույքաչափերով.

| ՀՀ | Ապրանքի ծածկագիրը՝ ըստ ԱՏԳ ԱԱ-ի | Ապրանքախմբի անվանումը | Հարկման բազայի չափման միավորը | Ակցիզային հարկի դրույքաչափերը (դրամ) | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ~~2020~~ 2024 թվականի հունվարի 1-ից | ~~2021~~ 2025 թվականի հունվարի 1-ից | ~~2022~~ 2026 թվականի հունվարի 1-ից | ~~2023 թվականի հունվարի 1-ից~~ |
| 1. | 2207 | էթիլային սպիրտ | 1 լիտր (100 տոկոսանոց սպիրտի վերահաշվարկով) | ~~2600~~ 6300 | ~~3380~~ 6900 | ~~4400~~ 7600 | ~~5700~~ |
| 2. | 2208 (բացառությամբ | սպիրտային խմիչքներ | 1 լիտր | ~~1560~~ | ~~2030~~ | ~~2640~~ | ~~3430~~ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 2208 90 330 0<br>2208 90 380 0<br>2208 90 480 0<br>2208 20<br>2208 30<br>2208 40) | | | 3800 | 4200 | 4600 | |
| 3. | 2208 90 330 0<br>2208 90 380 0<br>2208 90 480 0 | պտուղներից և (կամ) հատապտուղներից պատրաստված օղի | 1 լիտր | ~~800~~<br><br>900 | | | |
| 4. | 2208 20 | կոնյակ, բրենդի և այլ սպիրտային թուրմեր | 1 լիտր (100-տոկոսանոց սպիրտի վերահաշվարկով) | ա. 1-ից մինչև 3 տարի, ներառյալ՝ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ ~~3000~~ 3300<br>բ. 4-ից մինչև 5 տարի, ներառյալ՝ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ ~~3500~~3800<br>գ. 6-ից մինչև 10 տարի, ներառյալ՝ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ ~~6000~~6500<br>դ. 11-ից մինչև 15 տարի, ներառյալ՝ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ ~~8500~~ 9300<br>ե. 16-ից մինչև 19 տարի, ներառյալ՝ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ ~~14000~~ 15300<br>զ. 20 և ավելի տարի հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ ~~22000~~ 24000 | | | |
| 5. | 2208 30<br>2208 40 | վիսկի, ռոմ և այլ սպիրտային թուրմեր | 1 լիտր | ~~7000~~<br><br>8000 | | | |
| 6. | 2203 00 | գարեջուր | 1 լիտր | ~~130~~<br><br>150 | | | |
| 7. | 2204 | խաղողի գինի | 1 լիտր | ~~150~~<br><br>165 | | | |
| 8. | 2205 | վերմուտ և խաղողի այլ գինիներ | 1 լիտր | ~~1000~~<br><br>1100 | | | |
| 9. | 2206 00 | խմորման ենթարկված այլ ըմպելիքներ (խնձորի սիդր, պերրու | 1 լիտր | ~~150~~<br><br>165 | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | (տանձի սիդր), մեղրաըմպելիք), պտղային, հատապտղային, մրգային և այլ գինիներ | | | | | |
| 10. | 2402 (բացառությամբ 2402 10 000 01 2402 90 000 01 2402 10 000 02 2402 90 000 02) | ծխախոտի արտադրանք | 1000 հատ | ~~9625~~ 16100 | ~~11070~~ 17700 | ~~12730~~ 19500 | ~~14640~~ |
| 11. | 2402 10 000 01 2402 90 000 01 | սիգար | 1000 հատ | ~~605000~~ 660000 | | | |
| 12. | 2402 10 000 02 2402 90 000 02 | սիգարելա | 1000 հատ | ~~16500~~ 18000 | | | |
| 13. | 2403 | ծխախոտի արդյունաբերական փոխարինիչներ | 1 կգ | ~~1500~~ 1640 | | | |
| 14. | 2404 11 000 9 | ծխախոտի արտադրանք | 1000հատ | ~~2000~~ 3400 | ~~2300~~ 3750 | ~~2700~~ 4150 | |
| 15. | 2404 12 000 0 2404 19 000 | ծխախոտի արտադրանք | 1 միլիլիտր | 65 | 80 | 100 | |
| 16. | 2710 19 710 0 - 2710 19 980 0 3403 19 100 0, 3403 19 900 0, 3403 99 000 0 | քսայուղ | 1 կգ | ~~500~~ 550 | | | |
| 17. | 2710 12 | բենզին | 1 տոննա | ~~40000~~ 43600 | | | |
| 18. | 2710 (բացառությամբ 2710 12 2710 19 710 0 - 2710 19 980 0) | դիզելային վառելիք | 1 տոննա | ~~13000~~ 14200 | | | |
| 19. | 2709 00 | հում նավթ, նավթամթերքն | 1 տոննա | ~~27000~~ | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | եր | | 29450 | | | |
| | 2711 (բացառությամբ 2711 11 000 0 2711 21 000 0) | նավթային գազեր և գազանման այլ ածխաջրածիններ | 1 տոննա | ~~1000~~<br>1100 | | | |
| 20. | 2711 21 000 0 | սեղմված բնական գազ | 1 տոննա | ~~34000~~<br>37100 | | | |
| | ~~2404 11 000 9~~ | ~~ծխախոտի արտադրանք~~ | ~~1000 հատ~~ | ~~2000~~ | ~~2300~~ | ~~2700~~ | ~~3100~~ |
| | ~~2404 12 000 0 2404 19 000~~ | ~~ծխախոտի արտադրանք~~ | ~~1 միլիլիտր~~ | - | - | - | ~~55~~ |

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերում հիմք են ընդունվում ակցիզային հարկի հաշվարկման հետևյալ գործակիցները.

| | ~~2020~~<br>2024 թվականի հունվարի 1-ից | ~~2021~~<br>2025 -թվականի հունվարի 1-ից | ~~2022~~<br>2026 թվականի հունվարի 1-ից | ~~2023 թվականի հունվարի 1-ից~~ |
|---|---|---|---|---|
| Ակցիզային հարկի հաշվարկման գործակից | ~~1.0~~<br>1.08 | ~~1.03~~<br>1.16 | ~~1.06~~<br>1.24 | ~~1.09~~ |